

ՈՒՇ ԳՐԱԲԱՐԻ ՈՒՂԱԳՐԱԿԱՆ-ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՄԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆ

Ն. Բ. ՊՈՂՈՍՅԱՆ

Միջնադարի հայկական ձեռագրերում, վիմագրերում և այլ աղբյուրներում տարածված ուղղագրական շեղումներից մեկն է բառամիջում ա, ո ձայնավորներից հետո -յ-ի կիրառումը, հատկապես բարդ բառերում -ա- հոդակապից հետո: Թե՛ հին բնագրերում և թե՛ դրանց արդի հրատարակություններում բազմիցս կարելի է հանդիպել այս -յ-ի կիրառությանը, ինչպես օրինակ՝ ազգալոռհմ, անմեղալիր, անուշախամ, աստուածաբան, լիակատար, լուսալիայլ, ծաղկայզարդ, կուսակրան, հեծելալարք, մեղսալած, մաքրակենցաղ, յոզնալեղ, նորաբողբոջ, սքանչելալործ, վարդալպետ, քառախոս և այլն:

Բառամիջյան այս -յ- հավելահնչյունի խիստ առատ և աչքի զարնող կիրառությունը ստիպեց կանգ առնել նրա առանձնահատկությունների վրա:

Կարող է մեկ բնական հարց տրվել. արժե՞ քննել ուղղագրական ընդամենը մեկ անկանոնություն, երբ դրա կողքին առկա են տասնյակ ուրիշ անկանոնություններ, որոնց մի մասը որոշակի ժամանակում նույնիսկ օրինաչափ դառնալու միտում է ցույց տվել: Կարծում ենք՝ արժե՛, առնվազն նրա ծագման պատճառները քննելու առումով, մանավանդ որ, ինչպես կփորձենք ցույց տալ, այն ուղղակիորեն առնչվում է հին հայերենի բառակազմական մի կարևոր օրինաչափությանը:

Եվ այսպես, որո՞նք կարող են լինել միջնադարի բնագրերում բառամիջյան -յ-ի հաճախադեպ կիրառության պատճառները:

Թ-ի կիրառության ամենավաղ օրինակը՝ ուխտայտուր, ըստ մեր ձեռքի տակ եղած աղբյուրների, 8-րդ դարից է և գտնվում է Թալինի Մայր եկեղեցու 783թ. արձանագրության մեջ¹: Հետագա դարերում -յ-ն սկսում է հաճախադեպ հանդիպել հատկապես վիմագրերում, որոնք ուշարժան են այն իմաստով, որ դրանց տեքստերը հիմնականում կարելի է ժամանակագրավորել:

Վիմագիր տարբեր արձանագրություններից վերցված օրինակներ են. 13-րդ դարից՝ կովայհամար (Բջնի), աշխարհայկալութեան, դէմէթարայհակն, հարսնայհակ, նակ՝ հարսնէհակ, «Ծիւնց անվարձ Նորայվանս» (Հալիձոր), 14-րդ դարից՝ միայբանեցա, վանայկանիս, խաչայճորտս (Վարդենիք), զկալայթաղարն, զշրջայմաղն, ամենայկալ (Աշտարակի Կարմրավոր եկեղեցի), միայկեց (Երիցաթումբ) և այլն:

Ըլ ավելի շատ -յ- պարունակող բառեր են պահպանվել ձեռագրերում, ահա մնան բառերի մի փունջ. յագեյցան (887 թ., Վանանդ, Լազարեան Աւետարան)², սպայապետ (Վ.Պոլիս, 909 թ.), նախայվկայ (1173 թ.), Վարդայգիզ (1198 թ.),

12-րդ դարից՝ Թէոտոյպալսի, Խաչայտուրն, ամենայլի, զանայզան, ծառայխիտ, գեղեցկայզան, նմանայպէս, առատայբոխ, սիրայլիր, սրբայսնեալ,

¹ Այս արձանագրությունը հայկական թվականով մեզ հասած ամենահին հայերեն վիմագիրն է: Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրություն, Եր., 1973, էջ 87:

² Լազարյան Ավետարանն ունի ուղղագրական բազմաթիվ այլ շեղումներ ևս՝ զգոջ, եթե, փէսայ, որդո(յ), քարամ (թ)ք և այլն:

աստուածային հաճոյն, խոհեմայգոյն, տանային սրբութիւն, ուղ(ղ)այփառ, գեղեցկայզան, (յ)որդայինս.

13-րդ դարից՝ ի թուայբերութեանս, Մամայխաթուն, անուշայինոտ, բազմայխօս, շատայխօս, մեծայտուն, մեծայնեծ, կոչնայտուն, տարայպարտուց, չարայխօսութիւն, յառաջայգոյն, ձեռնայգրի, դառանպէս.

14-րդ դարից՝ մահայպարտ, հարցայքնութիւն, բազմայզան, կամայկոր, աստուածայծին, աստուածայմատ, մաքրայփայլ և այլն:

Ավելի ուշ շրջանի օրինակներ են՝ միայկոտոր, լիայբերան (1560 թ., Էրեր), Աբրայհամ, Բաբայջան, Դիզայփայտ, Ղարայմէլիք (1593 թ., Փարվանա գյուղ), եռայլիսակի, մեղսայմած, վարդայպետ, Ասպայհան, շնորհայզարդ, համայշունչ (1625 թ., Նոր Ջուղա) և այլն:

Յ-ի տարածման ժամանակաշրջանին ու գրչության վայրերին հետևելու հնարավորություն են տալիս մանավանդ ձեռագրերի հիշատակարանները: Դրանց վրա հենվելով՝ կարելի է ասել, որ գրչագրական ոչ բոլոր դպրոցներն են հետևում այս ուղղագրությանը: Այն ամենաշատ կիրառություն է ստանում 15-17 դարերում՝ Հայաստանի արևելյան շրջանների և հատկապէս Ջուղայի, ապա և՛ Նոր Ջուղայի գրիչների ձեռագրերում: 17-րդ դարից հետո գրավոր աղբյուրներում -յ-ի գրությունը սկսում է անվազել: Կիլիկիայի և Արևմտյան Հայաստանի գրչական կենտրոնների արտադրած ձեռագրերում -յ-ն խիստ սակավ է հանդիպում: Այս հանգամանքին հետևելով՝ կարելի է նույնիսկ փոքր-ինչ որոշակիություն մտցնել անհայտ ծագման գրքերի գրչության մոտավոր թվականի ու տեղի հարցում:

Ձեռագրերից բացի, -յ- են պարունակում նաև հայերեն ամենավաղ տպագիր գրքերը: 1512 թ. Պարզայտումարն իր վերնագրում և խորագրերում իսկ ունի -յ-ով ձևեր՝ Մարմնայխաղաց, Նշարգայցոյց, Երագայցոյց, Կաղանդայցոյց, և սրանց վրա հենվելով՝ կարելի է հնարավոր համարել, որ տպագրիչ Հակոբ Մեղայպարտը կա՛մ ծագումով Արևելյան Հայաստանից էր, կա՛մ այնտեղ էր կրթություն ստացել և հետևում էր իրեն ծանոթ ուղղագրական կանոնին, կա՛մ էլ նրա հրատարակության համար հիմք ծառայած ձեռագիրն է արտագրված եղել արևելյան դպրոցներից մեկում:

Բանասիրական գրականության մեջ մեր նշած -յ-ի տարբեր մեկնաբանություններ են տրվել:

1. Ս. Գյուլբուդաղյանը բառամիջի -յ-ն համարում է անհարկի, սխալ կիրառություն: «Կատարելայ հասակ, երախտայ մոռաց ձևերում -յ-ի կիրառությունը տրամաբանական է: Հետագա էջերում գրիչը միացրել է այդ բառերը՝ պահպանելով սակայն յ տառը»³, - գրում է նա: «Յ տառի անհարկի գործածությանը երկրորդ պատճառը նմանակությունն է: ...Օտտ գրիչներ ա, ո տառերով վերջացող բոլոր բառերին յ են ավելացնում: Այս դեպքում նրանք, ցանկանալով միասնական գրություն ստեղծել, գրում են ավանդական ուղղագրությամբ»⁴:

2. Վիմագրագետ Ս. Ավագյանը միջնադարի վիմագրերի լեզուն քննելիս նույնպէս -յ-ն համարում է անհարկի կիրառություն. «Ինչ մնում է Տիրայմարն բառի մեջ -յ-ի անհարկի կիրառությանը, ապա այս կարգի բարդ բառերում ա հոդակապից հետո հանդիպող -յ-ն բազմիցս վկայված է միջնադարի վիմագրերում ու ձեռագրերի հիշատակարաններում, որտեղ այս երևույթը յուրատեսակ օրինաչափության էր վերածվել»⁵:

³ Ս. Գյուլբուդաղյան, Հայերենի ուղղագրության պատմություն, Եր., 1973, էջ 106:

⁴ Նույն տեղում, էջ 107:

⁵ Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Եր., 1978, էջ 323:

3. Գ. Զահուկյանը -յ-ն համարում է բարբառային երևույթ⁶: Գ. Զահուկյանի նշած բառերը՝ գրայգէտք, վարդայպետք, եկեղեցայպան, ամենայսուրբ, կամայկից, տղայմարդիկն, մեղսայպարտ, կողայկից և մի շարք այլ բառեր իրոք խոսակցական ձևեր են, որ բնագրերի մեջ են մուծվել հեղինակների, գրիչների խոսվածքներից, մանավանդ որ այդ բառերը հաճախ ունեն հստակ բարբառային ձևավորում, ինչպես՝ լայճերն, պատայեցաւ, մոյացաւ, առայօտիկան, խոյեմ, հայազատ, վեհայկան և այլն: Սակայն անհար է ասել, թե հատկապես ի՞նչ բարբառների արդյունք են դրանք: Յ-ի գրվելու պատճառ կարող է լինել նաև տվյալ բառի փոխառումն ու տառադարձումը բարբառների միջոցով, օրինակ՝ սպայաւար - արս. սպահաւար (12-րդ դար), Ասպայհան:

Վերը բերված երեք մեկնաբանություններից պետք է ավելացնել նաև հետևյալ դիտարկումները:

4. Կարևոր դեր է խաղում գրիչների՝ գրաբարի ուղղագրական կանոններից տիրապետելու աստիճանը: Իբրև օրինաչափություն, կանոնավոր գրաբար բնագրերում -յ-ն չի հանդիպում, իսկ խոսակցականին մոտ լեզվով գրվածքներում, մանավանդ գրիչների ստեղծագործությունը հանդիսացող ձեռագիր հիշատակարաններում այն առատ է: Անկանոն ուղղագրությամբ հետևյալ հիշատակարանում, օրինակ, բնագիրը խառնաշփոթի չափ անհասկանալի է դարձել. «Ով ոյք սորայ կողմանէ կայմ (կամ - Ն. Պ.) հայկառայկութիւն կայմ այլայլութիւն գառի ես իմ կայմօքն իմ հայայլ մայլիցն տվա առի. ով ոյք խօյսի կայմ գուր գրաւէ ես իւրնին մայնէ (Յ)ուղայիյ պատիժն այրցէ...» (ձեռ. Վեճեսիկի, 154): Այս փոքր հատվածում անհարկի կիրառված -յ-ի 14 դեպք կա:

5. Յ-ի կիրառումը կարող էր գրիչների՝ սուկ ընդունված ավանդությանը հետևելու արդյունքը լինել, որ տարածված էր հատկապես 15-17-րդ դարերում: Իբրև օրինակ բերենք մի հետաքրքիր դեպք. Խիզանի գրչական դպրոցի հայտնի ներկայացուցիչներից Մեսրոպ Խիզանցի (գրիչ և ծաղկող) 1610-20 թթ. իր գրչազարած ձեռագրերում -յ-ն չի գործածում, իսկ ավելի ուշ, երբ վերաբնակվում է Նոր Զուղայում, այստեղ գրած ձեռագրերում արդեն գրում է հեզայհօգի, լուսայփայլ և բազմաթիվ նման ձևերով՝ ազդվելով Նոր Զուղայի ձեռագրերում ընդունված ուղղագրական կանոնից:

Յ-ի կիրառության կարևորագույն պատճառը, սակայն, թաքնված է ուշ միջնադարի գրաբարի բառակազմական կարևոր մի առանձնահատկության մեջ, որին ցանկանում ենք մի փոքր մանրամասն անդրադառնալ:

Միջնադարի գրիչները ձեռագրերում հաճախ բարդ բառերի բաղադրիչների միացման տեղում՝ ներքևի մասում դնում էին ներսդրական, ենթամնա՞, ինչպես՝ եռաչափք, կառափարել, պատմագիր, քահանայապետ: Տեքստում բառանջատում չլինելու պատճառով գրիչներն այդ եղանակով ցանկանում էին ցույց տալ, որ դա ոչ թե բառակապակցություն է (նման Տղայ Պարոն, Անդոկայ ձոր ձևերին), այլ բարդ բառ:

Ձեռագրերում բառերի կից գրությունը հնարավորություն չի տալիս հասկանալու, թե կողայկից, ամենայնե՞ն և նման ձևերը գրիչները դիտել են իբրև բառակապակցություննե՞ր, բառակապակցություններից առաջացած կցականնե՞ր, որոնցում սեռականի վերջավորությունը դեռևս գիտակցվում է, և ուրե՞մն նրա -յ-ն՝ գրվում: Գուցե բարդ բառերի առաջին բաղադրիչի վերջում՞ ա, ո-ից հետո գրիչներն ավելացնում էին -յ-ն, քանի որ նրանց համար այդ բառերը ոչ թե հողակապավոր բարդություններ էին, այլ բառակապակցություններ:

⁶ Տե՛ս Գ. Զահուկյան, Բարբառային երևույթները հայկական հիշատակարաններում, Եր., 1997, էջ 28, 37 և այլն:

⁷ Տե՛ս Ա. Արրահամյան, Ազվ. աշխ., էջ 183:

Այս կարծիքին մոտ մեկնաբանություն է տալիս Ս. Գյուլբուրդադյանը. «Ուխտայտուր, միայնքանեք բառերում գրիչը յ տառը գրել է, կարծելով, թե դրանք ուխտ և մի բառերի թեք ձևերն են, ուր յ տառը պիտի գրվի (ուխտայ, միայ), այսինքն՝ ստուգաբանական հիմունքով է գրել, իր կարծիքով հենվել է բառի կազմությանը, թեև բերված օրինակներում ա-ն հոդակապ է»⁸:

Եթե մեր ենթադրությունն իրոք ճիշտ է, ըստ որի՝ բնագրերում -յ-ն գրվում էր այն դեպքերում, երբ բառը դեռևս բառակապակցություն էր գիտակցվում, ապա կարելի է ասել, որ գրիչներն այդ ձևով արձագանքում էին ուշ գրաբարի բառակազմական հետևյալ կարևոր երևույթին. մի շարք բառակապակցություններ, սեռական հոլովով դրված առաջին բաղադրիչի հոլովական վերջավորության իմաստը կորցնելով, աստիճանաբար վերածվում էին բարդ բառերի: Ծաղկայգարդ, լուսայհոգի, նախայգիծ, ամենայգար հասարակ բառերում, Աղամայքերդ, Բերդայթաղ, Բակայվանք, Դաշտայհող, Մարգայձոր տեղանուններում դժվար է ժխտել առաջին բաղադրիչների սեռական հոլովաձև ունենալը: Եվ այս հոլովիչներն ավելի ուշ համաբանությամբ կարող էին վերածվել հոդակապի: Առավել ևս՝ հոլովի իմաստը մթազանելուց հետո, ինչը լավ երևում է մանավանդ զուգահեռ ձևերում՝ Զորոյ փոր-Զորոփոր-Զորափոր, Կատարոյ վանք-Կատարովանք-Կատարավանք, Միրանայ ձոր-Միրանաձոր, Խաթրայ վանք-Խաթրավանք: Ընդ որում, միջնադարյան աղբյուրներում հավասարապես կիրառված են նշված երկու ձևերն էլ: Կրկնենք՝ ձեռագրերի մեծագույն մասում բառանջատում չլինելու պատճառով հնարավոր չէ պարզել, թե գրիչը որ դեպքում է տվյալ բառը բարդ համարել, ո՞ր դեպքում՝ բառակապակցություն կամ գոնե կցական բարդություն:

Պահպանված մի քանի փաստեր ցույց են տալիս, որ -յ- պարունակող որոշ բառեր իրոք համարված են բառակապակցություններ. Աշտարակի Կարմրավոր եկեղեցու 14 դարի արձանագրության մեջ ամենայկալ բառի ամենայ և կալին բաղադրիչները գրված են իրարից հեռու (մինչդեռ հրատարակիչներն այն բերում են կից գրված ձևով): Կամ՝ 1498 թվին Քաջբերունիքում գրված մի ձեռագրում կատայհասակ ձևը, սակայն այն վստահաբար կիցգրություն է, քանի որ այդ ձեռագրի մյուս բոլոր բարդ բառերն առանց -յ-ի են՝ Աորաբողբոջ, շողապատկեր և այլն: Եսայի Նչեցու ինքնագիր ձեռագրում (1307 թ.) նույնպես պահպանվել են բառամիջյան -յ-եր, այն էլ մի քանիսը՝ բղջայխոհ, ճշմարտայպես, հարկատրայբար, երկոյտասան և այլն⁹: Արդյո՞ք բազմագիտակ Նչեցին ընդամենը հետևել է ուղղագրական ընդունված ձևին, թե՞ -յ- պարունակող բառերը նրա համար բառակապակցություններ էին:

Հայերենում զգալի թվով հնդեվրոպական արխայիկ բարդ բառեր են պահպանվել, ինչպես գրում է Գ. Զահուկյանը նախագրային հայերենի վերաբերյալ, որոնք «հիմքային այլ ձայնավորների օրինակներ են» և որոնցում այդ ձայնավորները «դժվար է տարբերել սեռականի համապատասխան կազմիչներից»¹⁰: Ընդ որում «դժվար է երբեմն տարբերել դրանց բարդությունն, թե՞ պարզ հարդություն լինելը», օրինակ՝ Աղոյ ջրիկ-Աղոջրիկ, Գայլու ձոր-Գայլուձոր, Զորոյ փոր-Զորոփոր և այլն¹¹:

Բացի նախագրային շրջանում առաջացած հոդակապավոր բարդություններից, հայերենում է՛լ ավելի շատ բարդ բառեր կան, որ ստեղծվել և ավանդվել են, ասենք, 10-13-րդ դարերի մատենագրությամբ և կազմված են թե -ա- հոդակապով, թե հոդակապի արժեք ունեցող այլ մասնիկներով: Հայերենի վաղնջական

⁸ Ս. Գյուլբուրդադյան, նշվ. աշխ., էջ 33:

⁹ Տե՛ս Եսայի Նչեցի, վերլուծություն քերականութեան, Եր., 1966:

¹⁰ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմության. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 414:

¹¹ Նույն տեղում, էջ 250:

շրջաններում սկիզբ առած լեզվական երևոյթը շարունակաբար կենսունակ է մնացել, ընդհուպ՝ միջնադարի գրաբարում, և բառակապակցություններից շատ հանգիստ առաջանում էին բարդ բառեր: Դա նման է բառակապակցությունների (հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությամբ)՝ կցական դառնալու լեզվական լայնամասշտաբ երևոյթի դրսևորման: Եթե նույնիսկ գրաբարում -ա- հոդակապն արդեն համագործածական ձևույթ էր՝ ժառանգված նախագրային շրջանից, սակայն բնագրերում -յ-ի առատ կիրառությունը առնվազն կարող է ցույց տալ հոլովական վերջավորության՝ հոդակապի վերածվելու ավելի վաղ տեղի ունեցած ընթացքը:

Այսքանից հետո, կարծում ենք, կարելի է լայնացնել հոդակապի՝ մինչ այժմ ընդունված շրջանակներ, և, հետևելով Էդ. Աղայանին, ներմուծել ներույթ տերմինը: (Էդ. Աղայանը գտնում է, թե, օրինակ, օրէնսգէտ բառի ս-ն -չի կարող ձևույթ համարվել, ոչ էլ հոդակապ, նա կարող է բացատրվել միայն պատմականորեն, բայց ոչ մեր արդի լեզվի կտրվածքով¹²):

Ներույթը, այսպիսով, բարդ բառերի բաղադրիչների կապակցման դեր ունեցող այն մասնիկներն են, որոնք սկզբնապես եղել են քերականական ձևույթներ և դեռևս ոչ ամբողջությամբ են զրկվել քերականական արժեքից, իրենց գործառույթով նմանվում են հոդակապին՝ հատկապես համաբանության ազդեցությամբ:

Ներույթ պարունակող բառերի կառուցվածքը մոտ է կցական բարդություններին: Ավելի ստույգ՝ ներույթ ունեցող բարդ բառերը գրաբարի հարադրավոր բարդությունների (զմտաւ ածել, ձեռն արկանել) և բուն բարդությունների մեջտեղում գտնվող ձևեր են:

Եվ այս երևույթի սահմանների մեջ պետք է դիտարկել -յ-երի առատ կիրառությունը գրաբարյան բնագրերում:

-Յ- պարունակող բառերն, այսպիսով, իրենց կազմում ունեն -ա- (-այ-), մասամբ՝ -ո- ներույթը, օրինակ. լիայկատար, նորայրդրոջ, ազգայտոհմ, մաքրայկենցաղ, ամենայտուրբ, անմեղայդիր, անուշայհամ, լուսայիպյլ, աստուածայբան, կուսայկրան և այլն: -Ա- ներույթով կազմված են նաև հարյուրավոր հատուկ անուններ՝ Միրզայվաի, Բաբայջան, Խոջայմալ, Անայխաթուն, Աստուածայտուր, Վարդայշաղ: Իսկ Անդոկաբերդ, Գեղամաբակ, Տուրաբերդ, Գլակավանք, Սահակաբակք, Վանանդաձոր, Մաղարթավանք և այլ տեղանունները հանդիպում են երեք կառուցով. բառակապակցական (Անդոկայ բերդ, Գեղամայ բակ, Մաղարթայ վանք), կցական (Անդոկայբերդ, Գեղամայբակ, Մաղարթայվանք), իսկական (Անդոկաբերդ, Գեղամաբակ, Մաղարթավանք) բարդությամբ:

-Ա- ներույթից բացի, այլ ներույթների օրինակներ են հետևյալները.

-Ե-. հնգետասան, երկեամ, խաբեբայ, արդի հայերենում՝ այցետոմս, հաշվեմատյան, հաշվեկշիռ, ծաղկեփունջ և այլն: Հատուկ անուններից՝ Գայլեձոր, Գայլեդրունք, Դպրեվանք, Խաչեքար, Ծակեձոր, Զագեձոր, Զորեհանգիստ և այլն: -Ե- ի+ա. բարեբեր, հոգեվարք, Այգեհատ, Բարեձոր, Ոսկեպատ և այլն:

-Ի-. սրանով կազմված բառերում առավել ցայտուն է զգացվում սեռականի իմաստը, ինչպես՝ Դողիբերդ, Թառիշեն, Ծալիձոր, Կանչիբերդ, Ծվանիձոր և այլն:

-Ո-. Արածոձոր, Խաղտոտոհն, Խորովանք, Մոքոփոր, Կորոբերդ, Կողո (ա)-տու, Մայրո (ա)ձոր, Զորոբերան, Զորո (ա)փոր և այլն, որոնք ձեռագրերում հավասարապես գրված են լինում նաև -յ-ով:

-Ու-. Աղուշեն, Գայլուձոր, Աշմուշեն, Արկադուկերտ, Լոռուսար, Հաուրթաղ, Մոխրուշեն և այլն:

¹² Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 81:

Իբրև ներույթ է գործածվում հոգնակի հայցականի -ս-ն՝ բանասարկու, յետս-
դարձումն, յետսմուտ, օրէնսգէտ, օրէնսդիր և այլն:

Վերջում հարկ է ավելացնել, որ ուսումնասիրողների ու բնագրերը հրատա-
րակողների մեծ մասը հաճախ անկարևոր համարելով բնագրերում եղած -յ-երը,
շատ դեպքերում այն ուղղակի դուրս են թողնում տեքստերից: Եվ ընդհանրապես
տպագրված գրքերում հետևողականություն և որոշակի սկզբունք չի նկատվում
-յ-երի կիրառության հարցում: Հրատարակիչները միևնույն գրքում մեկ գրում են
բաղադրիչներն առանձին՝ Ավիլայ բեգն, Տղայ Պարոն, մեկ միասին՝ Անայխա-
թուն, գԲաբայջանն, Տղայպարոն: Կամ օրինակ «Հայերեն ձեռագրերի Ե-ԺԲ դա-
րերի հիշատակարաններում» բերված է Ջորոյգետ բառը, նույն գրքի մեկ այլ տեղ՝
Ջորոյ գետ, իսկ անվանացանկում՝ Ջորովանք ձևերը: «ԺԷ դարի հիշատակա-
րաններում» կենայկից, գաւրայվար, Պարոյնտէր բառերում -յ-երն ընդգծված են
որպես ուղղագրական շեղումներ, իսկ լայներն, աստուայծասիրի, Հէրայպետի և
այլ բառերում չեն ընդգծված: Ստ. Օրբելյանի Պատմության 1986 թ. հրատարա-
կության գրաբար բնագրում բերված է Հրասեկայ բերդ, աշխարհաբար թարգմա-
նության մեջ՝ Հրասեկա բերդ, Հրասեկաբերդ զուգաձևերով: Այս բազմաձևու-
թյունը բարդացրել է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բա-
ռարանի» կազմողների աշխատանքը. բառարանում միևնույն տեղանվան գլխա-
բառը բերվում է մեկ Առնոյ ոտն, Մանեայ այրք ձևով, մեկ միասին՝ Առնոյտոն,
Ման (ե)այարք, նաև՝ Բագայառիճ, Թեղոյկից, Խաղտոյառիճ, Հարեւայեղցի և
այլն:

Կարծում ենք՝ բնագրերի հրատարակություններում պետք է անհրաժեշտա-
բար պահպանել բոլոր -յ-երը, քանի որ այն հաճախ կարող է էական տեղեկու-
թյուն տալ տվյալ բառի ճիշտ կառուցվածքի և ըստ այդմ նաև իմաստի մասին:

**Н. Б. ПОГОСЯН - Одна словообразовательно-орфографическая особен-
ность позднего grabara.** - В статье анализируется одна орфографическая за-
кономерность рукописей позднего средневековья. Начиная с XI-XII и особенно
после XIII-XIV веков, в рукописях очень часто встречаются такие сложные сло-
ва, в которых после соединительной гласной пишется -й- (միայրան, Աստուածայտոյր). Эти факты дают основание считать, что в позднем средневе-
ковье пишущиеся через -й- сложные слова рассматривались как словосочетания
или коммулятивные сложения. И в родительном падеже несогласованного опре-
деления после гласных ш и п писалось -й-.